**ՔԱՂՎԱԾՔ**

**ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.11.2019թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանուանդամ Մամիկոն Ասլանյանը:

**Մասնակցում էին՝**

**Հայաստանի Հանրապետական կուսակցության** ավագանու խմբակցության անդամներ՝

*Արփյոմ Գրիգորյանը, Վահագն Ավագյանը, Արմեն Մարինյանը, Սոխակ Մելքոնյանը,Գայանե Քալանթարյանը, Սեյրան Ղամբարյանը, Արման Ափինյանը, Հայկազ Մովսիսյանը:*

**Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության** ավագանու խմբակցության անդամներ՝

*Սեյրան Աղաբեկյանը:*

**«Հայկական Վերածնունդ» կուսակցության** ավագանու խմբակցության անդամներ՝

*Արկադի Փելեշյանը,Արեն Խաչատրյանը, Կարեն Դավթյանը:*

**«Լուսավոր Հայաստան» կուսակցության** ավագանու խմբակցության անդամներ՝

*Քրիստ Մարուքյանը, Վահե Կոռյանը, Արման Սիրադեղյանը, Ռոմիկ Մարգարյանը,Հայկազ Սիմիկյանը, Անահիտ Կարապետյանը, Կարեն Բեկչյանը :*

**«Բարգավաճ Հայաստան» կուսակցության** ավագանու անդամներ՝

*Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:*

**Նիստից բացակայում էին՝**

**Հայաստանի Հանրապետական կուսակցության** ավագանու խմբակցության անդամ՝

*Դավիթ Սիմոնյանը,Խորեն Վարդանյանը, Վահե Դոխոյանը, Մարինե Հովհաննիսյանը:*

**«Հայկական Վերածնունդ» կուսակցության** ավագանու անդամներ՝

*Հասմիկ Խլոպուզյանը,Տիգրան Նազարյանը:*

**«Լուսավոր Հայաստան» կուսակցության** ավագանու խմբակցության անդամներ՝

*Սուրեն Կարապետյանը, Կարինե Ղուկասյանը, Արմեն Ավետյանը:*

**Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության** ավագանու խմբակցության անդամ՝

Արևիկ Լոքյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը,* մարզպետարանի և համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ,քաղաքացիներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.15-ին նիստը հայտարարեց բացված:

*(Վանաձորի ավագանու 2019 թվականի 28.11.2019 ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):*

Նիստը վարող, համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանն առաջարկեց հաստատել ներկայացված օրակարգը:

**Կողմ՝ 12, դեմ՝ 11, ընդունվեց որոշում:**

**Հաստատվեց օրակարգը՝**

1. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ. Գրիգորյան

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 101-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ա.Օհանյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու և կանոնադրությունը հաստատելու մասին

զեկ. Ա.Օհանյան

4. Վանաձոր համայնքի ավագանու 18 ապրիլի 2017 թվականի թիվ 18-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ա.Օհանյան

5. Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 105-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ա.Օհանյան

6. Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 104-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ա.Օհանյան

7.Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 103-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ա.Օհանյան

8.«Հաշվապահ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 102-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ա.Օհանյան

9. Վանաձոր համայնքի 2020թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

զեկ. Վ. Դավիթավյան

10. Վանաձորի համայնքի ավագանու 04 նոյեմբերի 2004թ. թիվ 206 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Վ. Դավիթավյան

11. Վանաձորի համայնքի ավագանու 11 փետրվարի 2005թ. թիվ 22-Ն և 11 փետրվարի 2005թ. թիվ 23-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Վ. Դավիթավյան

12. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին

զեկ. Վ. Դավիթավյան

13. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանելու մասին

զեկ. Վ. Դավիթավյան

14. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _______________ լիազորելու վերաբերյալ

զեկ. Ա.Հովհաննիսյան

15. Վանաձոր համայնքի տարվա 10 լավագույն մարզիկների ընտրության, մարզիկներին և մարզիչներին սպորտային նպաստ տրամադրելու կարգը հաստատելու և Վանաձորի քաղաքային համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 68-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Գ.Մացակյան

16. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին

զեկ. Ա.Մովսիսյան

17. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս. Աբովյան

18. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս. Աբովյան

19. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի աճուրդով վաճառքի մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս. Աբովյան

20. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Մոսկովյան փողոցի թիվ 29ա հասցեում գտնվող 0.1933հա մակերեսով 06-001-0417-0013 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. Ս. Աբովյան

21. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ. Ս. Աբովյան

22. Վանաձոր համայնքի ավագանու 19 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 108 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Ս. Աբովյան

23. Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 66/16-1 հասցեում գտնվող հողամասը Վահրամ Հակոբի Ջահրեցյանին սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու (օտարելու) մասին

զեկ. Ս. Աբովյան

24. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

**1. ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Ավագանու անդամ Գայանե Քալանթարյանը ներկայացրեց ավագանու «Մշակույթի, կրթության, սպորտի, սոցիալական և երիտասարդական հարցերի» մշտական հանձնաժողովի նիստի արձանագրությունը, ուր բացասական եզրակացություն էր տրված որոշման նախագծի վերաբերյալ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Քվեարկությունից առաջ ավագանու անդամ Քրիստ Մարուքյանը դուրս եկավ նիստերի դահլիճից և այլևս չվերադարձավ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ՝ 10, ձեռնպահ՝ 3, որոշում չընդունվեց:**

Քվեարկությունից հետո ավագանու անդամ Վահե Կոռյանը դուրս եկավ նիստերի դահլիճից և այլևս չվերադարձավ:

**2. ԼՍԵՑԻՆ-** Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 101-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Հարցի քննարկման ընթացքում ավագանու անդամ Ռոմիկ Մարգարյանը դահլիճից դուրս էր եկել:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 6 /Ա.Սիրաղեղյան, Հ.Սիմիկյան, Ա.Կարապետյան, Հ.Ղամբարյան, Մ.Ապերյան, Դ.Հակոբյան/, ձեռնպահ՝ 1 /Կ.Բեկչյան/, ընդունվեց որոշում:**

**3. ԼՍԵՑԻՆ-** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու և կանոնադրությունը հաստատելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

**4. ԼՍԵՑԻՆ -** Վանաձոր համայնքի ավագանու 18 ապրիլի 2017 թվականի թիվ 18-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

**5. ԼՍԵՑԻՆ**- Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 105-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին::

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

**6. ԼՍԵՑԻՆ** -Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 104-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20 /Ա.Փելեշյանը դուրս էր եկել նիստերի դահլիճից/, ընդունվեց որոշում:**

**7. ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 103-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20 /Ա.Փելեշյանը դուրս էր եկել նիստերի դահլիճից/, ընդունվեց որոշում:**

**8. ԼՍԵՑԻՆ-** «Հաշվապահ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 102-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19, ձեռնպահ՝ 2 /Հ.Սիմիկյան, Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում:**

**9. ԼՍԵՑԻՆ-** Վանաձոր համայնքի 2020թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի տեղակալ Կարեն Սարոյանը:

Ավագանու անդամ Սեյրան Ղամբարյանն առաջարկեց զրոյական դրույքաչափ սահմանել որոշման նախագծի «2020 թվականի տեղական վճարների դրույքաչափերը» հավելվածի 9.8 կետի գ/,դ/ և ե/ ենթակետերում վոլեյբոլ, բասկետբոլ և ձեռքի գնդակ խաղային մարզաձևերի համար:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը, հավելվածի 9.8 կետերում առաջարկված փոփոխություններով հանդերձ, առանց հավելվածի9.8 կետի գ/, դ/ և ե/ ենթակետերի:

**Քվեարկությամբ, կողմ՝ 17, դեմ՝ 3 /Հ.Ղամբարյան, Մ.Ապերյան, Դ.Հակոբյան/, ձեռնպահ՝ 1 /Ա.Սիրադեղյան/, ընդունվեց որոշում:**

**10. ԼՍԵՑԻՆ**- Վանաձորի համայնքի ավագանու 04 նոյեմբերի 2004թ. թիվ 206 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի տեղակալ Կարեն Սարոյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19, /Ա.Մատինյանը և Ա.Ափինյանը ներկա չէին քվեարկությանը/, ընդունվեց որոշում:**

**11.ԼՍԵՑԻՆ**- Վանաձորի համայնքի ավագանու 11 փետրվարի 2005թ. թիվ 22-Ն և 11 փետրվարի 2005թ. թիվ 23-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի տեղակալ Կարեն Սարոյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19, /Ա.Մատինյանը և Ա.Գրիգորյանը ներկա չէին քվեարկությանը/, ընդունվեց որոշում:**

**12. ԼՍԵՑԻՆ**- ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի տեղակալ Կարեն Սարոյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 18, /Ա.Մատինյանը, Ա.Գրիգորյանը և Ս.Աղաբեկյանը ներկա չէին քվեարկությանը/, ընդունվեց որոշում:**

**13. ԼՍԵՑԻՆ-** Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի տեղակալ Կարեն Սարոյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

**14. ԼՍԵՑԻՆ** – Վանաձոր համայնքի ավագանու անդամ ______________ լիազորելու վերաբերյալ:

- Զեկուցեց աշխատակազմի Իրավաբանական բաժնի պետ Արևիատ Հովհաննիսյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Զեկուցողն առաջարկեց ավագանու անդամ Հայկազ Սիմիկյանի թեկնածությունը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել առաջարկված թեկնածուին հավանություն տալու համար:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

**15. ԼՍԵՑԻՆ-** Վանաձոր համայնքի տարվա 10 լավագույն մարզիկների ընտրության, մարզիկներին և մարզիչներին սպորտային նպաստ տրամադրելու կարգը հաստատելու և Վանաձորի քաղաքային համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 68-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Գևորգ Մացակյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

Քվեարկությունից հետո ավագանու անդամ Մարիամ Ապերյանը դուրս եկավ նիստերի դահլիճից և այլևս չվերադարձավ:

**16. ԼՍԵՑԻՆ -** Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար

նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ Արման Մովսիսյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:**

**17. ԼՍԵՑԻՆ-** Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Ավագանու անդամ Հայկազ Սիմիկյանն առաջարկեց նախագծի հավելվածից հանել 1ք 14 կետով Շիրակի խճուղի թիվ 6/8-1 հողամասը, քանի որ այն արդեն իսկ կառուցապատման ընթացքի մեջ է:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը, առանց հավելվածում ներկայացված 1ք 14 կետով Շիրակի խճուղի թիվ 6/8-1 հողամասը:
Ավագանու անդամ Կ.Բեկչյանը դուրս էր եկել նիստերի դահլիճից և քվեարկությանը չմասնակցեց:
**Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 3 /Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Վ.Ավագյան/, ընդունվեց որոշում:**

**18. ԼՍԵՑԻՆ -** Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 3 /Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Վ.Ավագյան/, ընդունվեց որոշում:**

**19. ԼՍԵՑԻՆ -** Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի աճուրդով վաճառքի մեկնարկային գները սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Զեկուցողն առաջարկեց տեխնիկական փոփոխություն որոշման նախագծի բ/ կետում և «Ներսիսյան փողոց» բառերը փոխարինել «Ուսանողական փողոց» բառերով, ուղղելով հասցեն:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը, առաջարկված տեխնիկական փոփոխությամբ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 18, ձեռնպահ՝ 2 /Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ընդունվեց որոշում:**

**20. ԼՍԵՑԻՆ -** Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Մոսկովյան փողոցի թիվ 29ա հասցեում գտնվող 0.1933հա մակերեսով 06-001-0417-0013 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Ավագանու անդամ Ա.Փելեշյանը դուրս էր եկել նիստերի դահլիճից և քվեարկությանը չմասնակցեց:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:**

**21. ԼՍԵՑԻՆ -** Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:**

**22. ԼՍԵՑԻՆ -** Վանաձոր համայնքի ավագանու 19 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 108 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:**

**23. ԼՍԵՑԻՆ -** Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 66/16-1 հասցեում գտնվող հողամասը Վահրամ Հակոբի Զահրեցյանին սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու (օտարելու) մասին:

- Զեկուցեց աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:**

**24.**Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2019 թվականի դեկտեմբերի 23-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:**

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2019 թվականի դեկտեմբերի 23-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 11.00-ն:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը